ԲԱՔՎԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՍՈՒՆԻ 1904 Թ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ. Ս.

XIX դ. երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը և XX դարասկզբին տեղ գտած հակացարական ելույթները ոտքի հանեցին նաև սուլթանական տիրապետության դեմ մաքառող արևմտահայությանը: Ազգային-ազատագրական այդ փուլի նշանավոր դրվագներից էր Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունը, որին աջակցելու գործում անմասն չմնաց նաև Բաքվի բովանդակ հայությունը:

Դեռևս 1903 թ. աշնանը Սասունի, Գելիեգուզանի, Ռշկանի բարձունքներում ինքնապաշտպանության ղեկավարներ Հրայրի, Անդրանիկի, Թորգոմի, Սեպուհի և ուրիշների մասնակցությամբ հրավիրված ժողովում քննության էր առնվել գոյամարտի պլանը, ստեղծվել զինվորական խորհուրդ, իսկ գոյամարտի ընդհանուր հրամանատարությունը դրվել էր Անդրանիկի վրա: Ժողովի առաջարկությամբ, Թորգոմը և Կայծակ Վաղարշակը մեկնեցին Անդրկովկաս՝ զենք բերելու նպատակով[1]:

Սասունի ազատասեր բնակիչները, այլևս չհանդուրժելով թուրքական ու քրդական հարստահարիչների կամայականությունները, 1904 թ. մարտին բարձրացրեցին ապստամբության դրոշը և սկսեցին անհավասար կռիվ մղել թուրքական ու քրդական հրոսակախմբերի դեմ: Միաժամանակ, Սուլթան Աբդուլ Համիդը որոշել էր Սասունը դատարկել հայերից՝ նրանց բնաջնջելու միջոցով. դա, բնականաբար, ոտքի հանեց սասունցիներին: Մարտ-ապրիլ ամիսներին Սասնա սարերը դառնում են պատերազմական գործողությունների թատերաբեմ[2]:

Սասունցիների պաշտպանությամբ հանդես չեկան մեծ տերությունները: Մասնավորապես Ռուսաստանը, տագնապած Անդրկովկասի հեղափոխական շարժումների վերելքից, շահագրգռված էր Արևմտյան Հայաստանում հանգստություն և կարգ ու կանոն պահպանելու մեջ[3]: Ուստի ցարական կառավարությունը բոլոր միջոցներով խոչընդոտում էր կովկասահայերի կողմից Սասունին որևէ օգնություն ցույց տալուն՝ հատկապես արգելելով նրանց անցնել Արևմտյան Հայաստան[4]: 1904 թ. փետրվարի

---

[1] **Համբարյան Ա.,** Սասունի 1904 թվականի գոյամարտը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1989, N 4, էջ 24]:

[2] **Թառոյան Կ.,** Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Ե., 1980, էջ 142:

[3] **Саркисян Е.,** *Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв., Е., 1972, с. 215.*

[4] 1904 թ. հուլիսի 11-ին 200 զինված հայեր անցնում են ռուս-թուրքական սահմանը: Հաջորդ օրը ռուսական սահմանապահները շրջապատում են հայերին և պահանջում, որ վերջիններս առանց դիմադրության հանձնվեն թուրքերին: Հայդուկները հարկադրված զենքերը հանձնում են: Թուրքերը ոչնչացնում են բոլորին (**Պողոսյան Ս.,** Ակնարկներ Արևմտյան Հայաստանի պատմության (19-րդ դարի վերջ 20-րդ դարի սկիզբ), Ե., 1990, էջ 121):

25-ին՝ Սասունի գոյամարտի նախօրյակին, Էրզրումի գլխավոր հյուպատոս Ն. Սկրյաբինը Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին ու Կովկասի կառավարչապետին հայտնում էր, որ, իր ստացած տեղեկությունների համաձայն, Անդրկովկասում հավաքվել են մոտ 2000 հայեր, որոնք գարնանը մտնելու են Թուրքիա՝ սասունցիներին օգնելու նպատակով, ուստի անհրաժեշտ էր համարում, որ ռուսական սահմանապահ ջոկատները խստորեն հետևեն հայերին և թույլ չտան սահմանն անցնել[5] : Սասունին զինական օգնության հասնելու նպատակով եռանդուն աշխատանք ծավալվեց նաև Կովկասում: Մի քանի ճանապարհներով զենք և մարտական խմբեր էին ուղարկվում Սասուն: Մրգաստան-Դուրան բարձրավանդակ (այսինքն՝ Երևան-Սասուն) կապը իրականացվում էր հետևյալ ուղղություններով՝ 1. Կարս-Խնուս-Սասուն, 2. Դավալու-Մակու-Թադեի վանք-Խոյ-Սասուն, 3. (Միրզաջան) Տաք աղբյուր-Արճեշ-Ախլաթ-Սասուն: Առանձին դեպքերում զենքի փոխադրումը Պարսկաստան, իսկ այնտեղից Արևմտյան Հայաստան կատարվում էր Բաքվով: Այս բոլոր փոխադրումները կատարվում էին արտակարգ ծանր պայմաններում: Հաճախ ուղարկված զենքի մի մասը տեղ չէր հասնում և ընկնում էր թուրքերի կամ քրդերի ձեռքը: Արևմտյան Հայաստանից հասած գույժերը, ցարական կառավարության հայահալած քաղաքականությունն արևելահայ երիտասարդությանը նույնպես մղում էին ազատագրական պայքարի ասպարեզ. կազմակերպվում էին զինական ու մարտական խմբեր՝ Արևմտյան Հայաստան անցնելու համար:

1904 թ. մարտին Սասուն մեկնող Թորգոմի և որսորդ Գևորգի 61 հոգուց բաղկացած «Որսկան» հայդուկային երկրորդ ջոկատի կազմում ընդգրկվել էին մի շարք մտավորականներ, բժիշկներ, ուսանողներ և քահանաներ: Խմբի կազմում էր նաև Բաքվի հայ հարուստ ընտանիքներից մեկի՝ Հայրապետ Քալանթարյանի որդին՝ ՀՅ Դաշնակցության անդամ Լևոն Քալանթարյանը[6]: Օլթիի շրջանում, սահմանն անցնելուց հետո, խումբը մարտի է բռնվում ռուսական սահմանապահ զորամասերի հետ: Հակառակ կողմից էլ կրակ են բացում թուրքերը: Երկուստեք կրակի մեջ հայտնվելով երկու ժամ տևած անհավասար մարտից հետո Թորգոմը հրամայում է չկրակել ռուսների վրա և հանձնվել: Սակայն ռուս կազակները, անտեսելով սպիտակ դրոշը, շարունակում են կրակել և սպանել հայդուկներից շատերին, նաև Թորգոմին[7]: Քչերին է հաջողվում փրկվել, որոնց թվում նաև՝ Լևոն Քալանթարյանին[8]: Գերի ընկածները ռուսական

[5] **Համբարյան Ա.,** Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Ե., 1999, էջ 225:
[6] **Գյուլխանդանյան Ա.,** Բագուի մեր գործիչները (Հայրենիք, Բոստոն, 1936, ԺԴ տարի, հունվար, N 3 էջ 144):
[7] Այդ մասին տե՛ս **Ենրոսիյան Ա.,** Հայկական հարց. Հանրագիտարան, Ե., 1996, էջ 141:
[8] **Գյուլխանդանյան Ա.,** նշվ. հոդվ., էջ 144:

զորքի հրամանատար, գնդապետ Բիկովի հրամանով, թուրք զինվորների աչքի առաջ մորթոտվում են[9]:

1903-1904 թթ. ռուս-թուրքական սահմանն անցան դաշնակցական մի քանի ջոկատներ ևս, Խանի (Բարսեղ Թիրաքյան), Թեքիրդաղցի Նովրուզի, Աշոտ Երկաթի և ուրիշների խմբերը[10]: 1904 թ. հունիսին «Երկիր» է անցնում նաև հնչակյանների «Արծիվ» հայդուկային խումբը՝ Բաբկենի (Պողոս Գրիգորյան-Ավագյանի) ղեկավարությամբ[11]:

Հայ ժողովրդի մի հատվածին՝ սասունցիներին, պատուհասած օրհասական այդ օրերին գործուն աջակցություն ցուցաբերեց Բաքվի հայությունը: Կործանման վտանգի տակ գտնվող իրենց եղբայրներին անպայման օգնելու ձգտումն այնքան մեծ էր, որ նրանք ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում: Սասունին զինական և տարաբնույթ օգնության ցույց տալու նախաձեռնողն ու գլխավորողը ՀՅԴ Բաքվի «Ոսկանապատ» կենտրոնական կոմիտեն էր, որն սկզբից ևեթ կարևոր նշանակություն էր տալիս ազատագրական շարժումների ռազմական նախապատրաստմանը, հատկապես ղեկավարների ու մասնակիցների մարտական պատրաստականությանը: Հետևապես, կենտրոնական կոմիտեի գլխավոր խնդիրներից էր մարտական ու զինատար խմբերի պատրաստումը, որոնք կուսակցության կոչով պետք է գնային Կարս ու սահմանակից այլ վայրեր՝ խմբեր կազմելու և Սասուն մեկնելու համար: Ռազմական գործին մոտիկից ծանոթանալու նպատակով, դաշնակցական Խեչոյի գլխավորությամբ, խիստ գաղտնի պայմաններում՝ Բաքվից դուրս, «Գայլի դրունք» կոչված վայրում, բաց դաշտում կազմակերպվում էին այդ խմբերի զինավարժությունները[12]: Բաքվում ստեղծվել էին նաև զենքի ու զինամթերքի պահեստներ ու արհեստանոցներ[13]: ՀՅԴ մարտիկներին հաջողվել էր զանազան վայրերում կազմակերպել մեծ ու փոքր խմբակներ, որոնք Հյուսիսային Կովկասից և Ռուսաստանի խորքերից գաղտնի ճանապարհներով զենք ու զինամթերք էին փոխադրում Բաքու: Այդտեղ հայ գործարանատիրոջ արհեստանոցներից մեկում պատրաստվում էին նաև պայթուցիկ ռումբեր, որոնք զենքի և զինամթերքի հետ տեղափոխվում էին սահմանագլուխներ: Բաքվի հայերն իրենց աջակցությունը ցուցաբերեցին նաև նյութապես[14]: Հայրենանվեր այդ գործում անմասն չմնացին Բաքվի հայ կանայք: Նրանցից ստեղծված խմբերը «Երկիր» գնացող հայդուկների համար պատրաստում էին ձեռագործներ և այլն[15]: Մ. Վարանդյանը հետևյալ բնութագիրն է տվել Բաքվի հայերի՝ Սասունին օգնություն փութալու շարժմանը. «Բալախանիի նավթահանքերը, Սև քաղաքը, բուն իսկ Բագուն ցանցապատած են Դաշնակցության բջիջներով: Բազմաթիվ են ծանոթ ու անծանոթ

---

[9] **Վարանդյան Մ.,** Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Ե., 1992, էջ 242:

[10] Նույն տեղում, էջ 238:

[11] Հիսնամյակ 1887-1937 Սոցիալ Դեմոկրատական Հնչակյան կուսակցության, Փրովիտենս, 1938, էջ 177-178:

[12] Պատմագրություն Հայ Հեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք), նվիրված Հ. Յ. Դ. 113 ամյակին, հ. Բ, Ե., 2003, էջ 111:

[13] **Գյուլխանդանյան Ա.,** Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ (Հայրենիք, Բոստոն, 1924, Գ տարի, նոյեմբեր, N 1, էջ 124-125):

[14] Նույն տեղում, էջ 125-126:

[15] **Վարանդյան Մ.,** նշվ. աշխ., էջ 238:

հայդուկները և մանավանդ հայդուկության երիտասարդ թեկնածուները…Ռազմամթերք և պայթուցիկ նյութեր կը փոխադրվեին ու կամբարվեին Բագուի մեջ՝ Թուրքահայաստանի և Կովկասի կարիքներուն համար»[16]: Հարկ է նկատել, որ թուրքական նոր ջարդերի սպառնալիքների տակ գտնվող արևմտահայությանը զինելու գործում մեծ նպաստ բերեցին «Փոթորիկ» ծրագրի միջոցով հանգանակված խոշոր գումարները, քանզի դրանցով գնված մեծաքանակ զենքով ու զինամթերքով հնարավոր եղավ սասունցիներին ցուցաբերել անհրաժեշտ օգնություն[17]:

Սասունին զորակցելու համար դեռևս 1903 թ. վերջերին Բաքվից Կարս, այնտեղից «Երկիր» անցնելու մտադրությամբ մարտական և զինատար այլ խմբեր էին մեկնել Սասուն: Մարտական այդ խմբերը «Երկիր» էին ուղարկվում բժշկական անհրաժեշտ ստուգման ենթարկվելուց հետո միայն[18]: Դեպի Սասուն զենքի փոխադրման գործն իր վրա էր վերցրել Եգոր Առուստամյանը (Մենակ): Ծանոթ լինելով սահմանագծային կարեվոր կետերին՝ նա, քայլելով ավելի քան 200-300 կմ, ուսումնասիրել էր Բասեն-Սասուն տանող ճանապարհները՝ դրանով իսկ ապահովելով Կարսից Բասեն փոխադրվող ռազմամթերքի ու զենքի պաշարները, որտեղից դրանք պետք է տարվեին Խնուս, իսկ այդտեղից Հրայր Դժոխքի մարդկանց միջոցով՝ Սասուն: Եգոր Առուստամյանը ապահովել է նաև 1903 թ. հուլիսին Թորգոմի 23-հոգանոց «Մրրիկ» հեծելախմբի անցումը Սասուն[19]: Խմբի մեջ էին 1890-ական թթ. ինքնապաշտպանության մասնակիցներ Տուրբախը, Քաֆթար Արշակը, Բաբերդցի Արշակը (Սեպուհ), Սվազցի Մուրադը, Մաշադի Ավետիսը, Ղարսեցի Նիկոլը և ուրիշներ[20]: Արևմտյան Հայաստան մեկնող հայդուկային և զինատար խմբերում ներգրավվել էին Բաքվի հասարակական գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչները:

Բաքվում այդ օրերին Սասունի ինքնապաշտպաններին օգնության հասնելու գործի գլխավոր կազմակերպիչներից էր անվեհեր հայդուկ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան)[21], որին և հանձնարարվում

---

[16] Նույն տեղում, էջ 237:

[17] **Խուդինյան Գ., Հակոբյան Ա.,** Հ.Յ.Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Ե., 2005, էջ 19:

[18] Պատմագրություն Հայ Հեղափոխական Դաշնակցության, հ. Բ, էջ 111-112:

[19] **Մենակ,** Դրվագներ Սասունի կռիվներեն, կ. Պոլիս, 1910, էջ 34: Մենակը զոհվել է Օնիկ Նեռուզի խմբին օգնության հասնելու պահին, Բասեն-Դալիբաբայի կռիվների ժամանակ (**Ռուբեն,** Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Ա, Թեհրան, 1982, էջ 148): Ի դեպ, Մենակն ունեցել է գրական հակումներ և գրել բանաստեղծություններ: Նա մտերիմ կապեր է ունեցել Ավետիք Իսահակյանի հետ, որը նրան ձոնել է »Մենակի՝ Ե. Առուստամյանի նվիրական ստվերին« երգը (**Իսահակյան Ավ.,** Հայդուկի երգեր, Ե., 1990, էջ 86-87):

[20] **Համբարյան Ա.,** նշվ. հոդվ., էջ 23:

[21] Նիկոլ Դումանը, 1882 թ. ավարտելով Շուշու թեմական դպրոցը, 3 տարի պաշտոնավորել է Արցախի կոնսիստորիայում: Այնուհետև ուսուցչություն է արել Ղուբայի հայոց դպրոցում: Դեռևս Ղուբայում եղած ժամանակ Դումանը տարվում է հեղափոխական գրականությամբ, կարդում Մ. Փորթուգալյանի հրատարակած «Արմենիայի» համարները: Ղուբայից Դումանն անցել է Պարսկաստան և աշխատել Թավրիզի և Սալմաստի վարժարաններում, ապա 1894-1896 թթ. մասնակցել Դերիկի կռիվներին: Բաքվում ապրած տարիներին Ն. Դումանն իր կրտսեր եղբոր՝ Պողոսի (Պավլի Բեկի) հետ աշխատել է Գր. Թումայանի նավթահանքում (տե՛ս Արև, Բագու, 28.IX.1914, N 143, տե՛ս նաև **Գյուլխանդանյան Ա.,** Հեղափոխական դեմքեր (Հայրենիք, Բոստոն, 1937, ԺԵ տարի, հունվար, N 3, էջ 146):

է դաշնակցական Խեչոյի և փորձված մի քանի զինվորների հետ մեկնել Սասուն: Նիկոլ Դումանին Սասուն ուղարկելը բնավ պատահական չէր: Դաշնակցությունը համոզված էր, որ Դումանի հեղինակությունն ու ռազմավարական տաղանդը շատ օգտակար կլինեին Սասունում: Մ. Վարանդյանի վկայությամբ. «Կը ղրկեին Նիկոլ Դումանը մանավանդ այն նկատումով՝ որ Սասնո բոլոր մեծ դեմքերը, Հրայրեն մինչև Անդրանիկ, ջերմ, անվերապահ հարգանք կը տածեին դեպի Գարահիսարի, Բողազքեասանի և Խանասորի կռիվներուն հերոսը, դեպի անոր ռազմագիտական ու վարչական տաղանդը, այլ և քաջությունն ու վճռականությունը»[22]: Նիկոլ Դումանի խմբին է միանում նաև նավթաշրջանի բանվորական հիվանդանոցի գլխավոր վարիչ Հակոբ Զավրյանը (Զավրիև)[23]:

1904 թ. հուլիսի սկզբներին Նիկոլ Դումանի խումբը Բաքվից կարողանում է Սալմաստի գծով անցնել Պարսկաստան, որտեղից Վասպուրականով պետք է հասներ Սասուն[24]: Պարսկաստանում խմբին են միանում նաև Գրիգոր Վարդանյանը (Սարգիս Բարսեղյան «Փոքրիկ Սարգիս»), Ռուբեն Տեր-Մինասյանը, հայդուկներ՝ Դարալագյազցի Խեչոն (Սարբազ), Ասատուրը, Առաքելը, շամախեցի Սերոբը, Թադևոսը, Խոյեցի Խեչոն, Գրիշան, Սուրենը, Ավդոն և Չալփափախը: Խումբը բաղկացած էր 17 հոգուց[25]: Խումբը Կոտուր-Ռազի-Սալախանե կետերով փորձեց անցնել պարսկա-թուրքական սահմանը և հասնել Վարագա լեռ: Առաջին ընդհարումները թուրքական կանոնավոր զորքերի և քրդական Մազրիկ ու Թակոռ աշիրեթների հետ տեղի ունեցան Ռազիի մոտ: Խմբին, սակայն, չհաջողվեց ճեղքել պաշտպանության շղթան, և երկու զոհ տալուց հետո նրանք վերադարձան Սալմաստ[26]: Չնայած սասունցիների համառ դիմադրությանը, այդուհանդերձ, թուրքական մեծաքանակ զորքերին հաջողվում է ճընշել հայ ժողովրդի մի բեկորի գոյամարտը: Անդրանիկ Օզանյանը, ցրելով իր խումբը, Պարսկաստանով անցնում է Բաքու, որտեղից էլ մտադրվել էր գնալ Թիֆլիս, Վիեննա և ապա Ժնև: Անդրանիկը Բաքու եկավ բժիշկ Հ. Տեր-Ստեփանյանի հետ[27]: Քաջարի և մեծահամբավ հայդուկը նպատակ էր դրել մոտիկից ծանոթանալու Բաքվի հայ բնակչության կյանքին, հայ բանվորական միջավայրին և հատկապես ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի կազմակերպչական աշխատանքներին[28]: Անդրանիկը Բաքվում հանգրվանել էր Նիկոլ Դումանի տանը, ծպտյալ՝ Մարտիրոս անվան տակ: «1904 թվի վերջերին էր,-գրում է Ա. Գյուլխանդանյանն իր հուշերում, որ Անդրանիկը իր մի երկու զինակիցներով Պարսկաստանից եկաւ Բագու և մեր շրջանում մնաց մոտ մի ամիս գուցե և ավել: Մի համեստ, զգաստ և

---

[22] **Վարանդյան Մ.,** նշվ. աշխ., էջ 242-243:
[23] **Գյուլխանդանյան Ա.,** Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, էջ 123-124:
[24] Նույն տեղում:
[25] **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 279, 281, 287:
[26] Նույն տեղում, էջ 295:
[27] **Սիմոնյան Հր.,** Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Ե., 1996, էջ 228-229:
[28] Նույն տեղում, էջ 229:

խոհուն զինվոր էր նա, մեծ ակնածությամբ վերաբերվում էր դեպի Նիկոլ Դումանը, որի մոտ էլ ապրում էր նա»[29]:

1905 թ. սկզբներին ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն ձեռնարկեց մի նոր խմբի մեկնումը Արևմտյան Հայաստան: Այս անգամ նախաձեռնողը բժիշկ Հակոբ Զավրյանն էր, որը Սասուն անցնելու անհաջող փորձից հետո երբեք չէր հրաժարվել իր մտադրությունից: Օգտագործելով Պետերբուրգում ունեցած իր կապերը՝ նա կարողանում է ռուսական կառավարության թույլտվությամբ բժշկական մի խումբ կազմել, որը տարագիրներին օգնելու նպատակով Մուշ քաղաքում պետք է հիվանդանոց բացեր[30]: Այդ նպատակով Հ. Զավրյանը նաև որոշ քանակությամբ դրամ էր հայթայթել: ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեն, Հ. Զավրյանի ծրագիրը քաջալերելով, օգտագործում է այդ առիթը զինվորական որոշ ուժեր անցկացնելու «Երկիր»: Խմբին են միանում նաև ծնունդով Գյոքչա գավառի Գիրք գյուղից Թադևոս Ամիրյանը (Գիժ Թաթոս), Մարգար Ժամհարյանը, Սմբատ Մարգարյանը և ռուսախոս գերմանացի, սոցիալիստ-հեղափոխական Վոլոդյա Զեյցը[31]: 1905 թ. սկզբներին խումբը Թիֆլիսից տեղ է հասնում Մուշ, որտեղ, սակայն, թուրքական կառավարությունը, խմբի համար արհեստական խոչընդոտներ ստեղծելով, արգելեց նրանց գործունեությունը: Անգամ արևմտահայերին թույլ չէին տալիս բժշկական օգնություն ստանալու համար մոտենալ բժշկին. «թույլ չէին տար հայերուն, որ մոտենային բժշկին, նույնիսկ բժշկվելու համար. ով որ անոր քով երթար, պիտի բանտարկվեր»[32]: Շատ չանցած, թուրքական կառավարության պահանջով, խումբը հեռացավ Էրզրում, իսկ այդտեղից մի քանի ամիս անց վերադարձավ Կովկաս:

Այսպիսով, անհաջողության մատնվեց արևմտահայությանը աջակից լինելու՝ Բաքվի հայերի վերջին փորձը: Հետագա ժամանակաշրջանում սպասվող իրադարձությունները ազգային քաղաքական ուժերին ստիպեցին մեկընդմիշտ կենտրոնանալ տեղի հայությանը հուզող ազգային-քաղաքական խնդիրների վրա:

БАКИНСКИЕ АРМЯНЕ И ГЕРОИЧЕСКАЯ САСУНСКАЯ БИТВА 1904 Г.

СТЕПАНЯН Г. С.

Резюме

Подъем национально-освободительного движения армянского народа во второй половине XIX в. и выступления против царизма,

[29] **Գյուլխանդանյան Ա.,** Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, էջ 124:
[30] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 355:
[31] **Գյուլխանդանյան Ա.,** Բագուի դերը մեր ազատագրական շարժման մեջ, էջ 128:
[32] **Ռուբեն,** նշվ. աշխ., հ. Ա, էջ 356:

имевшие место в начале XX в., подвигли на борьбу западных армян, в частности армян Сасуна, которых активно поддерживали армяне Баку, оказывая им всевозможную помощь, инициатором которой был бакинский центральный комитет Армянской революционной партии Дашнакцутюн. С этой целью в конце 1903 г. из Баку в Карс были отправлены вооруженные группы, намеревавшиеся переправиться в Сасун. Возглавляемые Николом Думаном, а также Акопом Заврияном группы в июле 1904 г. и в начале 1905 г. пытались поддержать сасунских повстанцев, однако их попытки не увенчались успехом.